N-03-111
27.06.2018թ.

Հայաստանի Հանրապետության վարչապետ

պարոն Նիկոլ Փաշինյանին

Հարգելի պարոն վարչապետ

Հայաստանի Հանրապետությունը 1993թ.-ին վավերացրել է ՄԱԿ-ի «կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիան (այսուհետ՝կոնվենցիա), այնուհետև Կիոտոյի արձանագրությունն ու Փարիզյան համաձայնագիրը և, մեր կարծիքով, պատշաճ մասնակցություն է ունեցել այդ բազմակողմ միջազգային պայմանագրերով սահմանված դրույթների կատարմանը, որոնք շահեկան են Հայաստանի համար:

Ըստ կոնվենցիայի կողմ երկրների 17-րդ համաժողովում ընդունված որոշման («Դուրբանի ճանապարհային քարտեզ»), 2012թ.-ից ձևավորվել ու այժմ գործում է ֆինանսական մեխանիզմ՝ Կլիմայական կանաչ հիմնադրամը (GCF), որի միջոցներից պետք է օգտվեն զարգացող երկրները՝ ինչպես կլիմայի փոփոխության դեմ գործողություններում (ջերմոցային գազերի արտանետումների կրճատում և կլանիչների զարգացում), այնպես էլ կլիմայի փոփոխության հետևանքով առաջացած խնդիրների հաղթահարման (կլիմայի փոփոխությանը հարմարվելու) համար:

Հաշվի առնելով Կլիմայական կանաչ հիմնադրամի գործունեության շրջանակները, ըստ որի այդ հիմնադրամի միջոցները պետք է ունենան "հավելյալ բնույթ", նպատակահարմար է համարվել ստեղծել համապատասխան նպատակային և նորարարական ֆինանսական մեխանիզմ մեր երկրի մակարդակով ու ելնելով այդ հանգամանքից ՀՀ կառավարության 2013թ. ապրիլի 25-ի նիստի N 16 արձանագրային որոշմամբ ընդունվել է հայեցակարգ, որով հավանության է արժանացել «Կանաչ ներդրումների սխեմա»-ի օրինակով՝ բնավճարների միջոցներից ստեղծել «քաղաքացիական ներդրումային շրջանառու հիմնադրամ» որպես կոնվենցիայով սահմանված վերը նշված դրույթների կատարման նորարարական ֆինանսական գործիք:

Այնուհետև, ի կատարումն նշված հայեցակարգի, ՀՀ կառավարության 2013 թ. նոյեմբերի 14-ի նիստի N 47 արձանագրային որոշմամբ ՀՀ բնապահպանության նախարարությանը ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը և ՀՀ ֆինանսների նախարարությանը հանձնարարվել է «ՀՀ կառավարությանը ներկայացնել առաջարկություն «Կանաչ ներդրումների սխեմա»-յի օրինակով քաղաքացիական ներդրումային շրջանառու հիմնադրամի ստեղծման վերաբերյալ»: Հանձնարարականի կատարման համար ժամկետ էր սահմանվել 2016թ.-ի 4-րդ եռամսյակը: Այնուհետև, ինչ-ինչ պատճառներով ՀՀ կառավարության 2016թ.-ի փետրվարի 18-ի նիստի N6 արձանագրային որոշմամբ այդ հանձնարարականի կատարումը հետաձգվեց մինչև 2018թ.-ի 2-րդ եռամսյակ:

Մեր տեղեկություններով վերը նշված նախարարությունները այդ հանձնարարությունը կատարելու փոխարեն ՀՀ կառավարությանն են ներկայացրել ՀՀ կառավարության որոշման նախագիծ, որով առաջարկվում է պարզապես «ուժը կորցրած ճանաչել

քաղաքացիական ներդրումային շրջանառու հիմնադրամի ստեղծման վերաբերյալ ՀՀ կառավարությանը առաջարկությունների ներկայացում» ՀՀ կառավարության հանձնարարականը:

Հարգելի պարոն վարչապետ

Վերը նշված որոշումները իրենց հիմնավորումներով հիմք են հանդիսացել ընդունելու ՀՀ կառավարության 2015թ. սեպտեմբերի 10-ի N42 արձանագրային որոշումը, որով Հայաստանի Հանրապետությունը ստանձնել է Փարիզյան համաձայնագրի դրույթների կատարման միջազգային հանձնառություն, որում ի թիվս այլոց հայտարարել է, որ նախատեսել է «ձևավորել համապատասխան օրենսդրական և ինստիտուցիոնալ դաշտ ու այդ նպատակով ստեղծել երկու բաղադրիչներից կազմված ֆինանսական մեխանիզմ:

1) առաջինը՝ ներքին (տեղական)՝ կլիմայական քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամի ձևաչափով, որը հաստատուն հիմունքներով համալրվում է բնավճարների միջոցներից, էկոհամակարգային ծառայությունների, այդ թվում՝ կլիմայական ռեսուրսներից օգտվելու դիմաց վճարումներից («ածխածնային բնավճար» (Carbon taxing)):

2) երկրորդը՝ արտաքին (միջազգային) ֆինանսական մեխանիզմները, որոնց միջոցները տրամադրվում են հավելյալության սկզբունքով՝ Կանաչ կլիմայական հիմնադրամից, Կիոտոյի արձանագրության հարմարվողականության հիմնադրամից, Գլոբալ էկոլոգիական հիմնադրամից, բազմակողմ ու երկկողմ ֆինանսավորման և այլ աղբյուրներից»:

Այստեղ կարևոր ենք համարում ընդգծել, որ կոնվենցիայով ու Փարիզյան համաձայնագրով նախատեսված հիմնական ֆինանսական գործիքները՝ Կանաչ կլիմայական հիմնադրամը, Գլոբալ էկոլոգիական ֆոնդն ու Կլիմայական ներդրումային ֆոնդը դրամաշնորհներ են տրամադրում «հավելյալության» սկզբունքով, այսինքն, այն դեպքում, եթե առկա է հիմնական համաֆինանսավորումը: Սովորաբար այդ համաֆինանսավորումը տրամադրում են միջազգային ֆինանսական կառույցները (բանկերը) վարկերի տեսքով ու ոչ միշտ Հայաստանի համար ընդունելի ու շահեկան պայմաններով: Ուստի չափազանց կարևոր է ունենալ համաֆինանսավորման ներքին՝ ազգային ֆինանսական գործիք, որի ներդրումային կապիտալը տարեց տարի աճելով կապահովի կայուն ու հետևողական զարգացող ներդրումային միջավայրի ընդլայնումն ու ամրապնդումը Հայաստանում, միաժամանակ հավելյալության սկզբունքով ներգրավելով դրամաշնորհներ: Որպես այդպիսի ֆինանսական գործիք մենք տեսնում ենք նշված Կլիմայական քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամը:

Վերը նշված կառավարության բոլոր 4 որոշումները, որոնց ընդունումը ուղեկցվել է քաղաքացիական հատվածը ներկայացնող հասարակական կազմակերպությունների ակտիվ մասնակցությամբ ու աջակցությամբ, նպատակաուղղված են այդ ներքին ֆինանսական մեխանիզմի ստեղծմանը:

Հաշվի առնելով վերը նշվածը, **առաջարկում ենք**.

1. չընդունել ՀՀ կառավարության 2013 թ. նոյեմբերի 14-ի նիստի N 47 արձանագրային որոշման 4-րդ կետը ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ նշված նախարարությունների առաջարկը.
2. նկատի ունենալով այն հանգամանքը, որ այդ որոշմամբ, ապա ՀՀ կառավարության 2016թ.-ի փետրվարի 18-ի նիստի N6 արձանագրային որոշմամբ հանձնարարականի կատարման սահմանված ժամկետը (2018թ.-ի 2-րդ եռամսյակ) ավարտվել է, առաջարկում ենք կրկին հետաձգել այդ հանձնարարականի կատարման ժամկետը մինչև 2019թ.-ի սկիզբը, նկատի ունենալով, որ ըստ Փարիզյան համաձայնագրի, Հայաստանի համար, որպես զարգացող երկրի, իր ստանձնած հանձնառությունների կատարման ժամանակահատվածը մեկնարկում է 2020թ.-ից:

Անհրաժեշտության դեպքում մենք պատրաստ ենք տրամադրել հավելյալ հիմնավորումներ Հայաստանում քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամի ստեղծման շահեկանության վերաբերյալ:

Նկատի ունենալով խնդրի կարևորությունը, մենք նախատեսում ենք անցկացնել քննարկումների շարք Երևանում ու Հայաստանի մարզերում, հրավիրելով ՀՀ Ազգային Ժողովի պատգամավորների ու միջազգային ֆինանսական կառույցների ներկայացուցիչների:

Հարգանքով՝

«ԽԱԶԵՐ» էկոլոգամշակութային ՀԿ, նախագահ Ամալիա Համբարձումյան

«ՏԱՆԻՔ» Սահմանամերձ բնակավայրերի մշակութային և սոցիալ-տնտեսական զարգացման ՀԿ նախագահ Հրայր Մելքոնյան

Հասարակական պաշտպանների միություն» ՀԿ, գործադիր տնօրեն.... Արամ Գրիգորյան

«ԲԻՈՍՈՖԻԱ» ՀԿ նախագահ Գևորգ Պետրոսյան

Հասցե՝ Երևան 0002, Սարյան 38/27, «ԽԱԶԵՐ» էկոլոգամշակութային ՀԿ
Հեռ. +374 11 554 321, բջջ.093 73 72 79
Էլ.փոստ՝ a.hambartsumyan@khazer.org ; info@khazer.org